Տեղեկություններ

Փետրվար 2009

# Կանխելով շմոլ գազով թունավորումը

## Տեղեկություն չափահասների և նրանց խնամողների համար

Մեկանից յուրաքանչյուրը շմոլ գազի թունավորման վտանգի տակ է գտնվում: Տարեց մարդիկ, ունենալով առողջական խնդիրներ՝ սրտի խրոնիկական հիվանդություն, անեմիա կամ շնչառության խնդիրներ, առավել շատ են ենթակա այս անհոտ, անգույն գազի ազդեցությանը:

Գիտե՞ք, որ շմոլ գազը (CO) թունավորման ամենատարածված պատճառն է ԱՄՆ-ում: Պատահական CO թունավորումը բերում է տարեկան 500 հոգու մահվան և 15,000 շտապ օգնության կանչերի: 65 տարեկանից բարձր մարդիկ առավելապես խոցելի են CO պատահական թունավորման նկատմամբ, քանի որ իրենք ավելի հաճախ են առողջական խնդիրներ ունենում:[1] Չնայած, որ CO-ի տագնապի կանչը կարող է փրկել կյանքը, այն տեղադրված է ամերիկացիների մեկ երրորդից քիչ տներում:[2]

### Ի՞նչ է շմոլ գազը (CO)

CO-ն անհոտ, անգույն գազ է, որը կարող է պատճառել հիվանդություն և մահ: Այն առաջանում է, երբ վառվում է ցանկացած վառելիք՝բնական գազ, պրոպան, բենզին, նավթ, կերոսին, փայտ կամ փայտածուխ: Սարքերը, որոնք արտադրում են CO, ներառում են մեքենաներ, նավեր, բենզինի շարժիչներ, գազ օջախներ և ջեռուցման համակարգեր: CO-ն կարող է առաջանալ այս աղբյուրներից փակ և կիսափակ տարածություններում: Երբ մարդը շնչում է CO, թունավոր գազը թափանցում է արյան մեջ և փակում է թթվածնի մուտքը, ինչը կարող է վնասել հյուսվածքները և մահ առաջացնել:[3]

### Որոնք են CO-ով թունավորման ախտանշանները

Մարդկանց մեծամասնության համար թունավորման ցածր աստիճանի առաջին նշաններ են թույլ գլխացավը և շնչապարտությունը չափավոր ֆիզիկական ակտիվության ժամանակ: Շարունակական կամ ուժեղ գազի ազդեցությունը կարող է առաջացնել գրիպի ախտանիշներ՝ ուժեղ գլխացավ, գլխապտույտ, հոգնածության պզացում, սրտխառնոց, հուսմունք, գրգռվածություն և թույլ պզրնություն, հիշողության և կողդինացիայի թուլացում:[4] CO-ն կոչվում է «լուռ մարդասպան», քանի որ, եթե վաղ ախտանիշներին անտեսվում են, անձը կարող է կորցնել գիտակցությունը և չկարողանալ խուսափել վտանգից:

### Դուք կարող եք չզգալ ախտանշանները, բայց գտնվել CO-ի վտանգավոր ազդեցության տակ

CO-ի ցածր խտացման մակարդակը կարող է չառաջացնել թունավորման ակնհայտ ախտանշաններ, սակայն կարող է բերել առողջության երկարատև վնասման, անգամ եթե CO-ի աղբյուրը վերացված է: Առողջական հետևանքները հետևյալն են՝ նյարդային

երկարատև խնդիրներ. սովորելու թերացում և հիշողության թուլացում, պզացմունքային և անհատական ապղեցություններ, պզայական և շարժական խանգարումներ:[5]

## Ո ՞վ է գտնվում CO–ի թունավորման վտանգի տակ

Ցանկացած տարիքի մարդիկ գտնվում են CO–ի թունավորման վտանգի տակ: Անձինք, որոնք տառապում են սրտի հիվանդություններից, անեմիայից, կամ շնչառական խնդիրներից, ավելի շատ են ենթարկվում շմոլ գազի ապղեցությանը:[6] Տարեց մարդիկ ավելի հաճախ են ունենում առողջական խնդիրներ և բարձրացնում մահացու վտանգի հետևանքը:[7] CO–ի թունավորումը կարող է շատ վտանգավոր լինել և չծնված երեխաների համար, պզալիորեն մեծացնելով մանկական մահացությունը և պարզացման խանգարումները:[8, 9]

## Առավել տարածված է փոքրամասնությունների մեջ

Վաշինգտոնի նահանգում փոքրամասնություն կազմող բնակչության մեջ անցկացրած հետազոտության արդյունքում պարզվեց, որ սպիտակամորթ բնակչության համեմատ, իսպանացիների մոտ չորս անգամ, իսկ սևերի` երեք անգամ բարձր է CO–ի թունավորման վտանգը: Ավելին, իսպանական բնակչության 67 %–ը և սևերի 40 %–ը թունավորվել են փայտածուխը որպես տան վառելիք օգտագործելու հետևանքով:[10]




## Եթե Դուք կարծում եք, որ շմոլ գազից թունավորման ախտանշաններ ունեք, ապա.

- Անմիջապես դուրս եկեք մաքուր օդով տարածք: Բացեք դռներն ու պատուհանները, անջատեք գազօջախները, վառարանները, ջեռուցման և նման այլ սարքերը և դուրս եկեք տնից:
- Զանգահարեք թունավորման կենտրոն 1-800-222- 1222 հեռախոսահամարով: Թունավորման մասնագետները կտեղեկացնեն Ձեզ, արդյոք Դուք ունեք հետագա բուժօգնության անհրաժեշտություն:

## Թունավորումից խուսափելու համար, հիշե՛ք:

- Տեղադրեք CO–ի տագնապի ազդանշանիչներ հանգստի սենյակներում:
- Ամեն տարի ստուգեք ջեռուցման համակարգերը և վառելիքով աշխատող սարքավորումները:
- Խուսափեք օգտագործել առանց օդանցքի սարքավորումներ:
- Երբեք մի վառեք վառելիքը շենքի ներսում, բացառությամբ գազօջախների կամ վառարանների, որոնք նախատեսված են անվտանգ օգտագործման համար:
- Ուշադիր եղեք շմոլ գազով թունավորման բոլոր ախտանշանների նկատմամբ:

## Այլ խորհուրդներ CO թունավորումից խուսափելու համար:

- Օգտագործեք գազի սարքավորումները կարգավորված վիճակում:
- Առանց օդանցքի վառարանը փոփոխելու դեպքում, գնեք և տեղադրեք օդանցքով վառարան:
- Օգտագործեք համապատասխան վառելիքը նավթի վառարանների մեջ:
- Տեղադրեք և օգտագործեք արտածծող օդափոխիչ գազօջախների համար:
- Բացեք ծխատարը բուխարի օգտագործելու ժամանակ:
- Ընտրեք հարմար չափի փայտյա վառարաններ, որոնք համապատասխանում են EPA–ի (շրջակա միջավայրի պահպանության գործակալություն) չափանիշներին:
- Համոզվեք, որ փայտյա վառարանի դռնակները պինդ պակվում են:

- Տարին մեկ անգամ կազմակերպեք ջեռուցման համակարգի և օդանցքի մասնագիտական ստուգում և մաքրում:
- Համոզվեք, որ ներսի վառելիքով աշխատող բոլոր սարքերը լավ վիճակում են և ունեն համապատասխան օդափոխություն:
- Երբեք մի թողեք աշխատող մեքենան ավտոտնակում, նույնիսկ եթե ավտոտնակի դռները բաց են:
- Օգտագործեք շարժական գեներատորը դրսում և շենքերից հեռու: Երբեք մի օգտագործեք շարժական գեներատորը պատշգամբի կամ դռների, օդանցքի կամ պատուհանների մոտ: Երբեք մի օգտագործեք շարժական գեներատորը Ձեր կամ Ձեր ընտանիքի հանգստի սենյակի մոտ:
- Երբեք մի օգտագործեք փայտածուխի մանղալ տանը, անգամ բուխարիի մեջ:
- Պրոպանով կամ այլ վառելիքով աշխատող վառարանները, որոնք տեղադրված են դրսորդական կամ ձկնորսական տնակներում, պետք է դեպի դուրս բացվող օդանցք ունենան:
- Երբեք մի ջեռուցեք Ձեր տունը գազօջախով:

## CO–ի տագնապի ազդանշանիչներ

Պատահական թունավորման դեպքերի կեսից կարելի է խուսափել տագնապի ազդանշանիչների օգնությամբ: Այդ ազդանշանիչները պետք է

### Շմոլ գազի ազդանշանիչներ



Էլեկտրական վարդակ

Մարտկոցից գործող Պատի/առաստաղի սարք

հաստատված լինեն Անվտանգության տեխնիկայի լաբորատորիայի (UL) կողմից և վաճառվեն տեխնիկայի տեղական խանութներում:[11] Դրանց արժեքը մինիմալ է, մանավանդ, եթե հաշվի առնենք այն փաստը, որ դա կարող է Ձեր և Ձեր ընտանիքի կյանքը փրկել: Տեղադրեք CO–ի տագնապի ազդանշանիչները Ձեր տան յուրաքանչյուր հարկում և հանգստի սենյակներում այնպիսի հեռավորության վրա, որ համակարգի ձայնը լսելի լինի: Ուշադիր հետևեք արտադրանքի հրահանգներին, դրա տեղադրմանը, օգտագործմանը և պահպանմանը: Ի տարբերություն ծխելու ազդանշանիչների, CO–ի ազդանշանիչների աշխատանքի ժամկետը կարող է լրանալ մի քանի տարի անց:

Թույլ մի տվեք, որ CO–ի ազդանշանիչի գնման փաստը բերի Ձեզ բացարձակ անվտանգության սխալ զգացողության: CO–ի ազդանշանիչը պետք է դիտարկվի միայն որպես օգնական վառելիքով աշխատող սարքերի ճիշտ օգտագործման և պահպանման համար: CO–ի ազդանշանիչների համակարգը չի նախատեսված վերահսկելու CO–ի

## Ինչպես տարբերել CO–ի թունավորման և գրիպի ախտանիշները

Քանի որ գրիպի և CO–ի թունավորման ախտանիշները համընկնում են, Դուք կարող եք սխալվել կողմնորոշման մեջ: CO–ի ախտանիշները հետևյալն են՝

- Դուք ավելի լավ եք զգում Ձեզ գտնվելով տնից հեռու:
- Տան անդամներից մի քանիսը հիվանդանում են միևնույն ժամանակ (գրիպը փոխանցվում է մի քանի օրվա մեջ):
- Ընտանիքի անդամները, որոնք ամենաշատն են ազդվել թունավորումից, իրենց ժամանակի մեծ մասը անցկացնում են տանը:
- Ախտանիշները հայտնվում են կամ մարդկանց վիճակը վատանում է սարքավորումը միացնելուց անմիջապես հետո կամ ավտոտնակում մեքենան աշխատացնելիս:
- Տան կենդանիները նույնպես հիվանդ են երևում, ցուցադրելով քնկոտություն և թմրածություն (գրիպի մարդկային տեսակները չեն փոխանցվում կենդանիներին):
- Ընդհանուր ցավ, ցածր տաքություն, կամ ուռած ավշահանգույցներ (բնորոշ է մրսածության և գրիպի ժամանակ):[12]

ցածր մակարդակը: Շատ հարցեր են հնչել, թե ինչքանով են պաշտպանողական CO-ի ազդանշանիչի չափանիշները, մանավանդ այնպիսի խոցելի խմբերի համար, ինչպիսիք են մեծահասակները: [13]

## Տարեց մարդիկ և շրջակա միջավայրի հետ կապված առողջական խնդիրներ

EPA-ի ծերացման նախաձեռնությունը աշխատում է մեծահասակների առողջությունը շրջակա միջավայրի վտանգներից պաշտպանելու ուղղությամբ վտանգները ղեկավարման և կանխման ռազմավարությունների, կրթության և հետազոտությունների օգնությամբ: EPA-ի ծերացման նախաձեռնության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելե՛ք **www.epa.gov/aging**

Այս տեղեկատվության տպած օրինակները կարող եք պատվիրել հետևյալ հասցեով՝ **http://www.epa.gov/aging/resources/factsheets/order.htm**

## Հավելյալ աղբյուրներ

### Your Local Poison Center

- 1-800-222-1222
- Internet: www.aapcc.org

### U.S. Environmental Protection Agency

*Carbon Monoxide*
**http://www.epa.gov/iaq/co.html**

### CDC

*Carbon Monoxide*
**http://www.cdc.gov/co/**

### Consumer Product Safety Commission

*Home Heating Equipment Safety*
**www.cpsc.gov/cpscpub/pubs/heatpubs.html**

*Carbon Monoxide Alarms*
**www.cpsc.gov/cpscpub/prerel/prhtml01/01069.html**

*Portable Generators*
**www.cpsc.gov/cpscpub/pubs/portgen.html**

## Տողատակ


1 Centers for Disease Control and Policy. Carbon Monoxide-Related Deaths – United States, 1999-2004. Morbidity and Mortality Weekly Report. December 21, 2007; 56(50):1309-12.

2 Home Safety Council. Unintentional Home Injury in the United States. State of Home Safety: 2004 Edition. http://www.homesafetycouncil.org./state_of_home_safety/sohs_2004_p017.pdf.

3 (CDC), National Center for Environmental Health, "Carbon Monoxide Poisoning: Questions and Answers," July 2006. http://www.cdc.gov/co/faqs.htm

4 The U.S. Environmental Protection Agency (EPA), Indoor Environments Division (6607J) Office of Air and Radiation, "Protect Your Family and Yourself from Carbon Monoxide Poisoning," October 1996. http://www.epa.gov/iaq/pubs/coftsht.html

5 Delayed Neuropathology after Carbon Monoxide Poisoning Is Immune-Mediated, Stephen R. Thom, Veena M. Bhopale, Donald Fisher, Jie Zhang, Phyllis Gimotty and Robert E. Forster, Proceedings of the National Academy of Sciences of the United States of America, Vol. 101, No. 37 (Sep. 14, 2004), pp. 13660-13665.

EPA. 2000. Air Quality Criteria for Carbon Monoxide. U.S.EPA, National Center for Environmental Assessment. June, 2000. EPA 600/P-99/001F.

6 Centers for Disease Control and Prevention (CDC), National Center for Environmental Health, "Carbon Monoxide Poisoning: Questions and Answers," July 2006. http://www.cdc.gov/co/faqs.htm

7 CPSC. 2004. Non-Fire Carbon Monoxide Deaths Associated with the Use of Consumer Products: 2001 Annual Estimates. U.S. Consumer Product Safety Commission, Division of Hazard Analysis, May 13, 2004.

8 Raub, J. A., M. MathieuNolf, N. B. Hampson, and S. R. Thom. Carbon Monoxide Poisoning - a Public Health Perspective. TOXICOLOGY (145):1-14, (2000).)

9 Liu, S. Krewski, D., Shi, Y, Chen, Y, and R.T. Burnett. 2003. Association between gaseous ambient air pollutants and adverse pregnancy outcomes in Vancouver, Canada. Environmental Health Perspectives. 111:1773-1778.

10 Ralston, J.D. and N.B. Hampson. 2000. Incidence of severe unintentional carbon monoxide poisoning differs across racial/ethnic categories. Public Health Reports. 115:46-51. U.S. Department of Health and Human Services.

11 Yoon, S., Macdonald, S., Parrish, G. 1998. Deaths from unintentional carbon monoxide poisoning and potential for prevention with carbon monoxide detectors. JAMA. 279(9): 685-687

12 U.S. Department of Housing and Urban Development. Healthy Homes Issues: Carbon Monoxide, Healthy homes Initiative Background Information, December 2005. http://www.healthyhomestraining.org/Documents/HUD/HUD_CO_Brief.pdf .

13 The Minnesota Department of Health, Environmental Health Services Division, "Carbon Monoxide (CO) Poisoning In Your Home," April 2007. http://www.health.state.mn.us/divs/eh/indoorair/co/index.html



Armenian translation of: *Preventing Carbon Monoxide Poisoning*
Publication Number EPA 100-F-09-008